ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 փետրվարի 2025 թվականի N 124 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 712-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, պետական պահպանության, արտաքին հետախուզության, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» N 712-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման վերնագրում «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ» բառերը փոխարինել «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» բառերով.

2) որոշման 1-ին կետի՝

ա. 8-րդ ենթակետում «ոստիկանությունում ծառայության» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարությունում ոստիկանության ծառայության, Ոստիկանությունում ծառայության» բառերով,

բ. 8.1-ին և 8.2-րդ ենթակետերը «ոստիկանության» բառից առաջ լրացնել «ներքին գործերի նախարարության» բառերով.

3) որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետում «Ի»,» և «և «Թ.1» բաժնի 16.2.-րդ և 16.3.-րդ կետերում» բառերը հանել.

4) որոշման 3.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.1. Սույն որոշման N 8 հավելվածով սահմանված հավելումները չեն վճարվում հավելվածում նշված ստորաբաժանումների հերթապահ մասի, հերթապահ մասի (բաժնի և բաժանմունքի իրավունքով), հերթապահ ծառայության, հերթապահ ծառայության (բաժնի և բաժանմունքի իրավունքով), պարետային ծառայության, օպերատիվ կառավարման կենտրոնի ծառայողներին՝ բացառությամբ սույն հավելվածի «Ժ» «Հույժ գաղտնի» բաժնի աջակցող ծառայությունների ծառայողների:».

5) որոշման N 8 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

6) որոշման NN 8.1 և 8.2 հավելվածների վերնագրերը «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ» բառից առաջ լրացնել «ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշման հավելվածի 2-4-րդ կետերի, 5-րդ կետի 3-րդ ենթակետի, 6-8-րդ կետերի գործողությունը տարածվում է 2024 թվականի օգոստոսի 14-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

4. Սույն որոշման հավելվածի 1-ին կետի, 5-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերի, 9-րդ և 10-րդ կետերի, 13-րդ և 15-րդ կետերի գործողությունը տարածվում է 2024 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

06.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ